Հաշվետվություն
2025 թվականի օգոստոսի 5-ից 9-ը Ամերիկայի Միացյալ Նահանգներ (Նյու Յորք) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**
   Սուրեն Թովմասյան, Կադաստրի կոմիտեի ղեկավար,

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Նյու Յորք, օգոստոսի 5-ից 9-ը:

3. **Հրավիրող կողմը.**
   ՄԱԿ-ի գլոբալ երկրատարածական տեղեկատվության կառավարման փորձագետների կոմիտե (UN-GGIM):

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Մասնակցություն ՄԱԿ-ի գլոբալ երկրատարածական տեղեկատվության կառավարման փորձագետների 15-րդ նստաշրջանին:

5. **Քննարկված թեմաները.**

- համաշխարհային երկրատարածական տեղեկատվության կառավարման ամրապնդման մեխանիզմներ,

- տարածաշրջանային կոմիտեների ներդրումը գլոբալ երկրատարածական տեղեկատվության ոլորտում,

- թեմատիկ ցանցերի ներդրումը երկրատարածական տեղեկատվությանն առնչվող համաշխարհային օրակարգում,

- երկրատարածական տեղեկատվության ապագա էկոհամակարգ,

- ՄԱԿ-ի ինտեգրված երկրատարածական տեղեկատվության շրջանակին (UN-IGIF) առնչվող հարցեր,

- համաշխարհային գեոդեզիական կոորդինատային համակարգ,

- երկրատարածական տեղեկատվության կիրառումը կայուն զարգացման և կլիմայի փոփոխություններին դիմակայունության բարձրացման ապահովման նպատակով,

- երկրատարածական, վիճակագրական և այլ առնչվող տեղեկատվության ինտեգրում,

- երկրատարածական տեղեկատվության կիրառումը հողօգտագործման և հողաշինարարության բնագավառում,

- վստահելի և ճշգրիտ տվյալներին, նորագույն տեխնոլոգիաներին առնչվող քաղաքական և իրավական շրջանակներ,
- ստանդարտների ընդունում և կիրառում երկրատարածական տեղեկատվության հարցերով զբաղվող համաշխարհային համայնքի համար,
- աշխարհագրական անվանումներ ստանդարտացում, համագործակցություն ՄԱԿ-ի աշխարհագրական անվանումների փորձագետների խմբի հետ,

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Միջոցառման շրջանակում հանդես եմ եկել օրակարգի 7-րդ (ՄԱԿ-ի ինտեգրված երկրատարածական տեղեկատվության շրջանակ), 9-րդ (Երկրատարածական տեղեկատվությունը՝ կայուն զարգացման համար) և 12-րդ (Ինտեգրված երկրատարածական տվյալներ՝ հողերի արդյունավետ կառավարման համար) կետերին առնչվող ելույթներով:

Ներկայացրել եմ Հայաստանի ձեռքբերումները ինտեգրված երկրատարածական տեղեկատվության շրջանակի ներդրման ուղղությամբ, մասնավորապես՝ 2019 թվականից ի վեր իրականացված ինստիտուցիոնալ բարեփոխումների արդյունքները: Ընդգծել եմ Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի կարևորությունը, 2023 թվականին ընդունված Տարածական տվյալների մասին օրենքի դերը, ինչպես նաև 2022 թվականին գործարկված ազգային գեոպորտալի արդյունավետությունը: Ներկայացրել եմ նաև հանրապետության բնակավայրերի կադաստրային քարտեզների ճշգրտման, հասցեների ստանդարտացման և աշխարհագրական օբյեկտների ճշգրտության բարելավման ուղղությամբ կատարված աշխատանքները: Ընդգծել եմ բազային տարածական տվյալների վերաբերյալ ընդունված 12 ազգային ստանդարտների կարևորությունը, որոնք ուղղված են տվյալների որակի ու ինտեգրման բարելավմանը:

Երկրատարածական տեղեկատվության և կայուն զարգացման վերաբերյալ ելույթում շեշտադրել եմ մարդկանց, տարածքի և քաղաքականության միջև փոխկապակցվածության կարևորությունը և երկրատարածական տեղեկատվության դերը զարգացման ծրագրերի արդյունավետ պլանավորման գործում: Ներկայացրել եմ Հայաստանի ազգային գեոպորտալի միջոցով բնապահպանական, ենթակառուցվածքային և կլիմայական տվյալների հասանելիության ապահովումը, որի նպատակն է նպաստել պետական մարմինների կողմից առավել արագ և արդյունավետ որոշումների կայացմանը: Ներկայացրել եմ նաև միջգերատեսչական տվյալների փոխանակման բարելավման, աշխատակիցների վերապատրաստման և բուհերի հետ համագործակցության ուղղությամբ կատարված քայլերը:

Հողերի արդյունավետ կառավարման համար ինտեգրված երկրատարածական տեղեկատվության վերաբերյալ ելույթում առանձնահատուկ ուշադրություն եմ

դարձրել կադաստրային քարտեզների ճշգրտման կարևորությանը: Ներկայացրել եմ, թե ինչպես են 2021 թվականին մեկնարկած բարեփոխումների շրջանակում ստեղծվել իրավական հիմքեր՝ օրթոֆոտոհատակագծերի հիման վրա քարտեզների համակարգված ճշգրտման համար: Ընդգծել եմ, որ այս աշխատանքներն ուղղակիորեն նպաստում են կայուն զարգացման մի շարք նպատակների իրականացմանը՝ ժամանակակից թվային ենթակառուցվածքի կառուցմանը (SDG 9), հողօգտագործման պլանավորման բարելավմանը (SDG 11) և սեփականության իրավունքների ամրապնդմանը (SDG 16): Հատուկ նշել եմ 2022 թվականին Ազգային գեոպորտալի (geoportal.am) և դրա քարտեզագրական հարթակի (maparmenia.am) գործարկման նշանակությունը, որոնք միավորում են բազային և թեմատիկ տարածական տվյալները մեկ ինտեգրված համակարգում: Ներկայացրել եմ, որ միջազգային աջակցությամբ ներկայումս իրականացվում է բարելավված գեոպորտալի նախագծման գործընթացը, որը հետագայում կնպաստի թվային ենթակառուցվածքի զարգացմանը և կապահովի ավելի արդյունավետ, թափանցիկ ու կայուն հողային կառավարում:

Առանձին հանդիպումներ եմ ունեցել Շվեդիայի Թագավորության, Կիպրոսի Հանրապետության և Ֆրանսիայի Հանրապետության պաշտոնական ներկայացուցիչների հետ, քննարկել ենք ընդհանուր ոլորտային հարցեր և հնարավոր նոր համագործակցությունների հեռանկարները:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Մասնակիցներին է ներկայացվել գլոբալ երկրատարածական տեղեկատվության կառավարման փորձագետների կոմիտեի ծրագրերի կառավարման վերաբերյալ զեկույցը, հաջորդ՝ 16-րդ նստաշրջանի նախնական օրակարգն ու անցկացման ժամկետները: Քննարկվել են փորձագետների կոմիտեի գործունեության ուղղությունները՝ հիմնված առկա առաջնահերթությունների վրա: Անդրադարձ է կատարվել Գլոբալ երկրատարածական տեղեկատվության կառավարման հարցերով ՄԱԿ-ի փորձագետների կոմիտեի Կենտրոնների (Գլոբալ աշխարհատարածական էկոհամակարգի առաջադեմ տեխնոլոգիաների կենտրոն, Գլոբալ գեոդեզիական առաջադեմ տեխնոլոգիաների կենտրոն, Գլոբալ աշխարհատարածական գիտելիքի և նորարարության կենտրոն) գործունեությանը, ինչպես նաև վերոնշյալ հաստատությունների հետ համագործակցության ծավալման հեռանկարներին:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկվել է ակտիվորեն շարունակել համագործակցությունը ՄԱԿ-ի գլոբալ երկրատարածական տեղեկատվության կառավարման փորձագետների կոմիտե աշխատանքային խմբերում:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

Սուրեն Թովմասյան 20.08.2025

Հավելված N 2 ՀՀ վարչապետի N 326-Ն որոշման

Հավելված N 3 ՀՀ վարչապետի N 1230-Ն որոշման

Հաշվետվություն
Գործուղման ծախսերի վերջնահաշվարկի մասին

1 Մարմնի անվանումը Կադաստրի կոմիտե

2 Գործուղման մասին իրավական ակտի համարը ՀՀ Վարչապետի Որոշում 01.07.2025թ. N581-Ա

3 Անուն, Ազգանուն, զբաղեցրած պաշտոն Սուրեն Թովմասյան Կադաստրի կոմիտեի ղեկավար

4 Գործուղման վայրը Ամերիկայի Միացյալ նահանգներ, քաղաք Նյու Յորք

5 Գործուղման ժամկետները 05.08.2025-09.08.2025թթ.

6 Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը(Կադաստրի կոմիտեի 2025 թվականի (ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)

1. ճանապարհածախս, 2. գիշերավարձ, 3. օրապահիկ

ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Անուն, ազգանուն	Ընդամենը (հազ. դրամ)
		Սուրեն Թովմասյան	
	Ավիաճառայության տեսակը էկոնոմ դաս Ավիաճառայության արժեք (դրամ)	582,225.00	582.2
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով) $	299	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	114,884.77	
	Օրերի քանակ	4	
	Ընդամենը (դրամ)	459,539.08	459.5
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով) $	134	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	51,486.82	
	Օրերի քանակ	5	
	Ընդամենը (դրամ)	257,434.10	257.4
Այլ ծախսեր	Ապահովագրական ծախսեր	11,550.00	11.6
Ընդամենը ծախսեր (դրամ)			1,310.7

Գլխավոր քարտուղար Միհեր Խաչատրյան

Ֆինանսատնտեսագիտական վարչության պետ/
գլխավոր հաշվապահ Գևորգ Սարդարյան
21.08.2025թ.